

նում են ոչ թէ օրական հացի կարօտ աղքատները, տար կերակուրից զուրկ մուրացկանները, այլ հարուստները, մեծամեծները...

Այժմ պ. պ. Կ. Խաչատրեանց, Ս. Ղազարեանց և Գ. Աբաջեանց 10-ական բուրջի նուրբեյին տեղիս հայոց դպրոցներին, փոխանակ տեղական սովորութեան համաձայն, քելեխի հաց տալու խել պ. Մ. Ղազարեանց 15 ր. նուրբեյ կեղեցուն, աղքատներին բաժանելու համար Զանկալի էր որ ուրիշներն էլ օրինակ առնէին յիշեալ պատմութիւնը, և փոխանակ իրանց հարուստ բարեկամներով քելեխի հացի առիթով ահագին աւելորդ ծախսեր անելու, ժամերով բարոսի կենացը կոտորելու, ուղղակի այդ ծախսերը դրո՞ծ դնէին աղքատներին դաւաններին բարոյական անուշ մատակարարելու, որով աւելի սուրբ գործ կատարած կը լինէին թէ Աստուծո և թէ մարդկութեան առաջ:

Ի դէպ է այստեղ մի քանի խօսք ասել հետեւեալ հարցի մասին: Կարո՞ւմ չա՞յ լազ ժամանակներէն սովորութիւն կայ, որ իւրաքանչիւր շաբաթ օր «Թապաղ» են շրջեցնում փողոցներում, աղքատներին օգնելու բարի նպատակով: Իւրաքանչիւր շաբաթ գոյանում է 5—10 ր., նախելով թէ թապաղ շրջեցնող ինչ հոգու և աղքատներին տէր է: Մի երկու անգամ այդ թապաղը շրջեցրին տեղիս հայոց դպրոցի հոգաբարձուները և 10 բուրջուց մի բան էլ աւել դուրս եկաւ: Վերջապէս շաբաթական գոյացած այդ գումարը կարծիք առաջնորդները, ըստ քմահաճութեան, բաժանելիս են եղել ու՞մ որ կամեցէ են, ինչպէս որ ցանկացել են, առանց որ և է հաշիւ պահելու: Առձեռն հաւաքել, առձեռն բաժանել են Զանկալի էր, որ գտնէ այսուհետև հոգևոր կառավարութիւնը հոգ տանէր աննպատակ չը կորչելու այդ փողերը, այլ կազմէր մի առանձին բարեխիղճ հոգաբարձութիւն, որը հաստատարի մարդկանց ձեռքով շրջեցնէր այդ բարեգործական թապաղը, և այդ փողով կրթութիւն տար այն անձար աղքատներին դաւաններին, որոնք նիւթական միջոց չունենալով, զուրկ են մնում կրթութիւնից և ուսումից: Եթէ հիմալի այդպիսի նպատակով մի աղքատանոց, և կազմվի մի բարեխիղճ հոգաբարձութիւն, տարեկան առնուազն 500 բուրջի կը գոյանայ այդ շաբաթական թապաղից, բայց կողմնակի եկամուտներէն: Այդքան պակաս, բայց կողմնակի եկամուտներէն: Եթէ աղքատները մուրացկանութեան ճանկերից և ուսումնաւորան տալ Վատ չէր լինի, եթէ մի և նոյն նպատակով այդ թապաղի իրաւունքը յանձնէին հայոց դպրոցների հոգաբարձութեան, միայն այն պայմանով, որ յարգելի հոգաբարձութիւնը մի որոշ քանակութեամբ աղքատ գերդաստաններից որեւիցէներն և որեւիցէներն ընդունէր դրացւորում, տալով նրանց մի և նոյն ժամանակ թէ հոգուստ և թէ ամեն տեսակ դասական պիտոյքներ:

Ս. Տ. Մ.

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

Յունիսի 29-ին

Թումբուզ գիւղը յայտնի է Հին-Նախիջևանին շրջակայ գիւղերի կարգում, որպէս առաջնակարգ գիւղ: Թէ իր արդիւնաբերութեամբ և թէ հարստութեամբ: Բայց զգալիորակ Ժողովուրդը չէ գնահատում բնութեան բարեկեցութիւնը, չէ օգտվում իր ծննդավայրի պտղաբեր հողից և միշտ դիմում է պանդխտութեան: Տղամարդիկ ամեն բան երեսի վրա են գցում և գնում են օտարութիւն, որտեղ տարիներով են մնում, վատնելով անկարգ կեանքի մէջ իրանց երիտասարդական ոյժերը: Արարդարձորներն էլ մնում են իրանց հայրենի գիւղի մէջ մի քանի ամիս միայն, չուայլաբար վատնում են այդ ժամանակամիջոցում իրանց հետ բերած փողերը և ապա նորից կորչում են գիւղից: Գաղթողների ընտանիքները մեծ մասամբ չը գիտեն էլ թէ ուր է իրանց հեռացած անդամը, ողջ է նա արդեօք, թէ մեռած է:

Թումբուզ գիւղը ունի 160 տուն բնակիչ, որոնցից 20 տուն միայն պարսիկներ են, մնացածները բոլորն են հայեր: Եւ Բայց վերջին ժամանակները Պարսկաստանից սկսեցին գաղթել դէպի Թումբուզ բազմաթիւ պարսիկներ, որոնք հետզհետէ սկսեցին տիրանալ հայերի պտղաբեր հողերին: Այժմ սովորական են դարձել այդ գիւղում աւազակութիւնների ու սպանութիւնների դէպքեր, որոնք առաջնայ ժամանակներում չա՞տ հազարաւոր էին: Քանի անգամ Ժողովուրդը զիմէ է գիւղի տանուաշէնին, խնդրելով որ կար-

գաղթութիւն անի հեռացնելու յիշեալ թախառական, օտարերկրեայ պարսիկներին: Բայց այդ խնդրեցները մինչև այժմ ապարդիւն են անցնում: Իսկ գիւղի խաղաղ բնակիչները չա՞տ անգամ հանգստութիւն չունեն աւազակներից:

Շ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՆԻՑ մեզ գրում են: «Ոչ մի տարի այսքան անկարգութիւններ չեն եղել մեր Նոր-Բայազէտի հայոց երկեսն ուսումնարանների ուսուցչական խմբի մէջ, որքան այս տարի: Ուսուցիչները միմեանց մէջ խնդրեցներ են սարքում, ամեն մէկը դրանցից աշխատելով վայր գցել իր ընկերով պատիւը հասարակութեան աչքում և ջանալով ջնջել նրա ամբողջ տարւոյ աշխատութիւնը: Հոգաբարձութիւնն էլ, փոխանակ վերջ դրնելու այդ վնասակար ուղղութեան, ինքն ըստանձնեց լինելով կուսակցութիւնների, հոգաբարձութեան ամեն մէկը պաշտպանում է այս կամ այն վարժապետին, ընդդէմ միմեաների: Այդ անկայի թշնամութիւնները յայտնվեցան նոյն խել այս օրերս (յունիսի վերջերս) տեղի ունեցած աշակերտների հարցաքննութիւնների ժամանակ:»

Ստացանք «Արաքս» պատկերազարդ հանդիսի 2-րդ գլխից: Դա այս տարւոյ երկրորդ և վերջին գլխից է: Ինչպէս յայտնի է հանդէսը հրատարակվում է Պետերբուրգում: Հրատարակիչը յայտնում է որ յոյս ունի եկող տարվանից հրատարակել իր հանդէսը առանց նախնական գրաքննութեան: Մեր ստացած տետրակը պարունակում է իր մէջ ի միջի այլոց՝ խրմանի, Իսաֆի, Մերենցի, Սանասարեանցի, Մակար կաթողիկոսի, նկարիչ Արաքսիկոս պատկերները և նրանց համառօտ կենսագրութիւնները:

ՄՕԶԻՕԿԻՑ մեզ գրում են: «Յունիսի 10-ին վերջացան տեղիս հայոց ուսումնարանների հարցաքննութիւնները, որոնք, առհասարակ, ցաւալի սպաւորութիւն գործեցին հասարակութեան վրա: Ամիս 23-ին հոգաբարձութիւնը այնու ամենայնիւ, կարծում ենք «խաթիւ» համար, վկայականներ տուեց չորս աշակերտներին: Ահա է խոստովանել որ մեր Մօզիկի հայոց դպրոցները, փոխանակ առաջադիմելու անդադար յետադիմում են և եթէ այդպէս շարունակվի, հասանական է որ այդ դպրոցները շուտով խալաւ կը կորցնեն իրանց նշանակութիւնն ու վարկը:»

ՄՕԶԻՕԿԻՑ մեզ գրում են: «Մեզանում էլ կայ, ինչպէս Թիֆլիսում, երեցիփոխանական հարց: Այս օրերս հոգևոր իշխանութեան խիստ հրամանով տեղիս Ս. Ստեփանոս եկեղեցու երեցիփոխ, Պալէկ Խաչիչ Գանչումանց, արձակվեց երեցիփոխական պաշտօնից: Նոր ընտրված երեցիփոխ, Թովմանէս Գանչումանց ստանձնեց երեցիփոխի պաշտօնը, ընդունելով հինգ այն դուռնալը, ինչ որ գտաւ եկեղեցական արկղում, իսկ մնացած 2000 բուրջու գումարը գանձում է, ինչպէս պատմում են, նախկին երեցիփոխ, Պալէկ Գանչումանցի մի բարեկամ վաճառականի ձեռքում: Երեսուցի Միս երեցիփոխ, այն է Ս. Գեորգ և Ս. Աստուածածին եկեղեցիների երեցիփոխ, պ. Թուշմալեան նոյնպէս հրաժարական տուեց իր պաշտօնից: Լսում ենք որ հոգևոր իշխանութիւնը կարգադրել է վերցնել Թովմանցեան եկեղեցական արկղում պակասած 6,500 բուրջու փոխարէն մի պարտատուրհակ:»

Մեզ գրում են ԱԼԵԲԱՆԻԿՈՎՈՒՅ հետեւալը: «Գուլիսի 3-ին մեր քաղաքի հայ-կաթողիկ եկեղեցում կատարվեց նոր վախճանված հայր Ալէքսանդր վարդապետ Արարատեանի քառասունօրեայ հոգեհանգիստը: Հանգուցեալի գերեզմանը դարձրւած էր պատկերով և կանաչով: Հոգեհանգստից յետոյ կարդացվեց պ. Ջուանիի հեղինակած երգը հայր Ալէքսանդր վարդապետի յիշատակին նուիրած և պ. Պողոս Բէրուբեանի համառօտ ճառը: Միայն զարմանալի է որ հայ-կաթողիկ հոգևորականութիւնը բաւական սառն կերպով և անտարբերութեամբ վերաբերվեց դէպի հանգուցեալի հոգեհանգիստը:»

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՆԻՑ մեզ հաղորդում են, որ այս տարի այդտեղի բերքը լաւ է լինելու: Շուտով սկսվելու է խոտաքաղը և նրանից յետոյ հացաբոյսերի հոճոճը:

Մեզ գրում են հետեւալը: «Մի քանի օր առաջ Նոր-Բայազէտի գաւառով անցաւ, իր խումբով յայտնի աւազակապետ Քեարամը, որի գալը այստեղ մեծ աղմուկ հանեց Ժողովրդի մէջ: Քեարամը իր քանակից գնացող խմբից սպանել է երկու ձի և մի թուրքին, որը իր նախկին թշնամիներիցն էր: Այս Նոր-Բայազէտի գաւառը թողնելով, Քեարամը ապաստանվել է Դիլիջանի անտառում:»

ՄԵՂԼԻՑԻՑ, պ. Աւետիս Վաչեանցից ստացանք 22 բուրջի: Այդ գումարը, որը հանդանոված է բոսն և մի անձանց մէջ, մեզ խնդրում են գործ դնել հանգուցեալ Իսաֆիի գերեզմանի վրա կառուցվելի արձանի համար:

Գուլիսի 6-ին քաղաքային խտրօնում, ինչպէս հազորդի էինք, սկսեց ներկայացուցիչներ տալ Մօսկվայի կայսերական խտրօնի դրամատիկական խումբը: Խումբը շատ մեծ չէ, բայց կազմված է շատ լաւ և խմբի բոլոր անդամները, ինչպէս երեւում է, միանգամայն հասկանում են միմեանց և հետեւապէս տիրում է կատարելու անսամբլ: Բայց, տարաբաղդաբար, առաջին երկու ներկայացումները չունեցան այն ազդողութիւնը, որ կարելի էր սպասել: Եւ այս բանում մեղաւոր են ոչ թէ դերասանները, այլ պիէսաները: Առաջին օրը խաղում էին «Եմիրովիչ-Գանչիկօ» «Բաղդադ» («Сяк-либе») նոր կոմէդիան: Այդ պիէսան մի անգամ ևս ապացուցեց թէ որքան վերջին ժամանակներս ընկել է ուսուցիչական Առանց պարզ ընդհանուր դադափարի, ի կեղծ դրութիւններում և բնաւորութիւններում, աղաւաղած հազարաւոր անգամ ծածած մտերմով և փիլիսոփայութիւններով—հա՛ա պիէսայի ընդհանուր պատկերը և դժուար է մի այդպիսի պիէսայում սպաւորութիւն գործել, քանի որ ներկայ եղող հասարակութեանը միանգամայն ակներև է բոլոր ներուները կեղծ լինելը: Եւ այդ պիէսան հասարակութիւնը կարողացաւ մինչև վերջը նայել չորսու մի հիւրերի: Մի ուրիշ աւելի թույլ ոյժեր ունեցող խումբը հայել թէ կոմէդիան ազատէր հասարակութեան դժգոհութիւնից: Առաջին տեղը բռնում է ի հարկէ, տ. Ֆեդոտովի, ապա աչքի էր ընկնում օր. Լիշովսկայա. այդ դերասանուհին դեռ նոր է բեմ դուրս գալի, բայց այժմանից կարելի է նախագուշակել նրան փառաւոր ապագայ: Միս օրը, յուլիսի 7-ին, ներկայացնում էին Օտորովսկու «Трост» Որքան էլ դրական և բեմական արժանաւորութիւններ ունենայ Օտորովսկու գրչի այս պտուղը, բայց այնու ամենայնիւ նրա թիպերը անհասկանալի են ներկայ սերնդին, մասնաւոր կողմնացիներս Չը հասկացած տառապանքների համար դժուար է մեզ լաց լինել: Կատէրինայի դերը առաջնակարգ տեղն էր բռնում տ. Ֆեդոտովի: Բեյպետարի մէջ: Նոյնը կարելի է ասել և այժմ, չը նայած, որ նա բաւական պատաւել է այդ դերի համար:

Տեղական «Нос. Обоз.» լրագիրը ստացել է հետեւեալ նկատողութիւնը: «Համարեա ամբողջ շօրապանեան դաւառում տարածված է մի անմիտ լուր այն բանի մասին, որ շուտով քսան տարեկան աղջկեանց պէտք է զինուոր տանեն: Այդ լուրը սարսափ է գցել ամբողջ գաւառում: Այդ լուրի հետեանքն այն էր, որ համարեա բոլոր քսանամեայ աղջկաները շտապեցին մի կերպ մարդու գնալ, զինուորագրութիւնից ազատվելու համար: Բայց, որպէս հնչու է գուշակել, այդպիսի միջոցը ամենքի համար մատչելի չէր կարող լինել: Այդ անմիտ լուրի տարածումը վերագրում են մի գրագիր, որը ցանկանում էր պոտոր ջրումը ձուկ որսալ:»

Պետերբուրգի զանազան մասնագիտական դպրոցներում բարձրագոյն ուսում ստացող հայ երիտասարդների թիւը, «Новое Время» լրագրի խօսքերով, այս տարի հասնում է 118-ի, որոնցից 27 հոգի գտնվում են համալսարանում, 11—քաղաքացիական ինժեներների ինստիտուտում, 16—տեխնոլոգիական ինստիտուտում, 10—լեռնային, 2—ճանապարհների հաղորդակցութեան ինստիտուտում, 12—անասնաբան, 1—ուսուցչական ինստիտուտում, 7—զինուորական-բժշկական ակադեմիայում, 5—գեղարուեստների ճեմարանում, 2—գեղարուեստների նպաստող կայսերական ընկերութեան ուսումնարանում, 11 կայսերական ընկերութեան ուսումնարանում, 11 կոնսերվատորիայում, որոնցից 4 տղամարդիկ են:

և 7 կանայք, 3—Պալլադեան զինուորական ուսումնարանում, 2—արտիլերիական, 2—կոնստանտինեան և մէկ-մէկ գտնվում են պաժետիկ կորպուսում, նիկողայոսեան ինժեներական ուսումնարանում, ծովային ուսումնարանում, ընդհանուր ինժեներների ուսումնարանում, և վերջապէս, ինժեներական կոնսերվատորիան ուսումնարանում:

Ղապախի գաւառից «Новое Обозрение» լրագրին գրում են հետեւալը: «Քեարամի անսպասելի կերպով յայտնվելը ոտի կանգնեցրեց ոչ միայն մեր ամբողջ պոլիցիան, այլ և գաւառական ամբողջ աղաքանակութիւնը փոքրից մինչև մեծը: Լայնատարած Ղապախի համարեա իւրաքանչիւր ծառի տակ զինուորներ են կանգնեցրած, որոնք մեծ մասամբ, բաղկացած են քիչ թէ շատ հրապէս գործածիւր ընդունակ մանուկներից և ծերերից: Այդ «փարաւոնեան զօրքը» կազմված է բացառապէս տեղական բնակիչներից մի բուռն աւազակներից գաւառը պաշտպանելու համար: Ոչ Քեարամն է մեզ մօտ, ոչ էլ նրա խումբը, ինչպէս ևս ձեռք գրել են, նրանք արդէն քաղած են դէպի Երևանեան նահանգը: Բայց բանը նրանում է, որ թէ ոտակաւորութիւնը և թէ ազգաբնակիչութիւնը լաւ ճանաչելով իրանց երկրացի Քեարամին, չեն կասկածում, որ նա ձեռքերը ծալած չի նստի երևանեան նահանգում և որ նա Պարսկաստանից մեզ մօտ եկել է աւարառութեան համար: Եւ ահա այս պատճառով բնակիչներից իւրաքանչիւրը, առանձին վերցրած, օր ու գիշեր հոկում է իր ունեցածի վրա, բոլոր ստրուկ սպասելով անկու հիւրերին: Քեարամը շըրջակէ և նահանգներում իր հինգ զինակիցների հետ միասին, և նրա բոլոր աղանքը բաղկացած է երկու ձիաների վրա բեռնած հինգ պոռ փամփուշտներից:»

Հաստատ աղբւրներից լսում ենք, որ ԼՂՄԻԾ-նի ձեմարանի պատմութեան ուսուցիչ պ. Փիլիպոս Վարդանեանց թողնում է ձեմարանի դասատուի պաշտօնը, և նշանակվում է տեսուչ Գուլիսեան-Մարտիրոսեան օրիւրական դպրոցի Զանկալում: Այդ պաշտօնը փոխարինում էր ընտրած նոր ասպարեզի մէջ:

Մշտախ գաւառի ՎԼԻՍՏԻՍԻԵ գիւղից գրում են վրաց «Իւլիքա» լրագրին, որ յունիսի 30-ին, կէսօրվայ ժամի 3-ին, այնտեղ տեղաց սաստիկ կարկուտ, որը լիստ միասեց այգիներին. ծեր մարդիկ ասում են, որ իրանց կեանքում այսպիսի կարկուտ դեռ չեն տեսել: Կարկուտի ամեն մէկը մի բուռնցքի մեծութիւն ունէր, կարծես դետիւր ծածկվեց սասուցի կտորներով: Բայց բարեբաղդաբար կարկուտի տեղաւր երկար չը տեց, եթէ ոչ այգիներում այլ ևս կանգուն բան չէր մնայ: Բայց այնու ամենայնիւ վնասը խիստ մեծ պէտք է լինի: Նոյն օրը Գաւաղ գիւղում սաստիկ քամի մի հաւաքին ծառ վայր գցեց, որի տակ մնալով երկու կանայք, մեռան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՐԱՔԱԿԱՆ ՄԻ ԳՈՐԻՒ ՔԵՆՈՒԹԻՒՆԸ

Այս օրերս Լճիկում սկսվեց մի շատ նշանաւոր գործի դատարանական քննութիւնը, որը շօշափում է թէ իրանդական հարցը, և թէ այդ հարցի համար աշխատող շատ նշանաւոր անձանց: Խրանդական գործի Ֆրանկ Օ'Գոննէ 1,250,000 Ֆրանսիկ քաղաքացիական պահանջ է առաջադրել անգլիական նշանաւոր «Times» լրագրի դէմ, մեղադրելով այդ լրագրին իր դէմ արած դիֆամացիայի մէջ:

Ներկայումս ահագին ուշադրութիւն է գրաւել այդ քաղաքական նշանաւոր գործը, թէ եւրոպական մամուլը և թէ հասարակական կարծիքը լուրջ հետաքրքրութեամբ հետևում են այդ գործին, այդ սլառաճառով աւելորդ չենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել այդ մասին:

1887 թվ. սկզբներին, երբ իրանդական հարցը սուր կերպարանք էր ստացել, «Times» լրագիրը, որ պահպանողական բնաւորութիւն ունի, կամեալով հակակրթութեան առաջ բերել անգլիացիների մէջ դէպի իրանդական գործիչները, յայտնեց և աշխատեց ապացուցանել, որ Պարսէլ և

իր կուսակիցներն են եղել այն քաղաքական ըն-
դամությունները որոնք և զեկապարհները, որոնք
տեղի ունեցան իրանդիայում, և որոնք, ինչպես
այսօր է, ահազին աղետի հանցյալն իր միջոց
ապացուցանելու համար «Times» լրագիրը սպա-
գրեց իր էջերի մէջ մի շարք յօդուածներ, «Par-
nelliem and Crime» վերնագրով, որոնք ահազին
իրարանցում բարձրացրին, և որոնք սկսվում էին
նոյն իսկ Պարսկերի մի նամակով որի մէջ այդ
նշանաւոր գործողը արդարացիութեամբ էր Գիւնիս-
Պարսկի մէջ կատարված սպանութիւնները Այդ-
պիսի մի նամակի ապագրութիւնը, որը վերագր-
վում էր Պարսկերին, ահազին չիտի բարձրացրեց
հենց նոյն օրը, երբ լոյս տեսաւ «Times»-ի այդ
համարը Մարքերը յուզվեցին, և Պարսկեր շտապեց
յայտնել, որ այդ նամակը իրանը չէ, այլ կեղծ է,
ինչպէս և յիշեալ յօդուածները մէջ ամփոփված
շատ զօրումնաները Այդ յօդուածները մէջ շոշափ-
վում էր և Ֆրանկ Օ'Գոննելի անունը, որը և
գառ բացեց «Times»-ի դէմ, 1,250,000 Ֆրանկի
քաղաքացիական պահանջ առաջադրելով Օ'Գոն-
նել մի ժամանակ իրանդական պատգամաւոր էր
համայնքների ժողովում. նա հրաժարվեց այդ
պաշտօնից, տարածաշրջանները ունենալով Պար-
սկերի հետ, թէ և մինչև այժմ էլ նա իրանդական
ինքնավարութեան գործի ամենաշնորհ պաշտպան-
ներէն մէկն է։ Եւ իսկապէս յանուն այդ գործի,
յանուն այդ ինքնավարութեան խնդրի էլ նա այդ
դատը սկսել է, կամենալով կասկածանքներից
փարատել իրանդական ինքնավարութեան կու-
սակցութիւնը, և արմատաւորել անկ այն հակա-
կրութիւնը, որ կարող է տաճել անգլիական ազ-
գի մի նշանաւոր մասը, եթէ «Times»-ի յայտնած
մեղքերը հաստատվեն։ Իրանդիայում կատարված
քաղաքական սպանութիւնների վերաբերմամբ մեծ
հակակրութիւն յայտնեց նոյն իսկ անգլիական
ժողովրդի այն մասը, որը ինքն ըստ ինքեան հա-
մակրում է իրանդական հարցին, և հենց այդ
պատճառով «Times» սիրում է այդ կէտի վրա,
կամենալով ստուգել հասարակութիւնը դէպի
այդ հարցը և զրա պաշտպանները, որպէս զի
հասարակական կարծիքը իր երեսը դարձնի իրան-
դիայի գործիչներից։ Հասկանալի է ուրեմն որ
«Times» ձեռք է առել բաւական սուր, և միան-
գամայն շատ կասկածելի միջոց, որի ճշմարտու-
թեան ապացուցումը բաւական դժուարութիւն
ներ է ներկայացնում։

Այդ պատճառով գործը հենց սկզբից շատ աղ-
մալի է։ «Times»-ի խմբագրութիւնը իր կողմից
հինգ փաստաբան է դուրս բերել։ Գործի մէջ
խառնվում են և կը խառնվեն անգլիական պե-
տական շատ նշանաւոր անձանց անունները, մա-
նաւոր աղետաւոր կուսակցութիւնից։ Օ'Գոն-
նելի պաշտպանը արդէն յայտարարեց դատարա-
նում իր մեղադրանքի հիմունքները, և յայտնեց,
որ նա շատ անգամ գրաւոր կերպով յանդիմանել
է այն իրանդական գործիչներին, որոնք կամե-
ցին են իրագործել իրանդական հարցը զինամիտի
և զէնքի միջոցով, իսկ «Times» այն միջոց է
յայտնել, որ Գիւնիս-Պարսկի սպանութիւնների
գործի սկզբը և կատարման բոլոր պարագաները
հենց սկզբից յայտնի էին Օ'Գոննելին։ Ինչպէս ե-
րևում է դատարան կը դայ և Պարսկեր, հերքելու
իր մասին տարածված լուրերը։

Գատարանում ներկայ է ահազին բազմութիւն
Գործի քննութիւնը դուրս է կը շարունակվի աւելի
բան քան նիստ։

ԵՐԿՈՒ ԿԱՅՈՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆԸ

Գերմանական Վիլհելմ երկուստարը կայսրի
Պետերբուրգ գնալը Նորին կայսերական Մեծու-
թիւն Ալեքսանդր III-ի հետ տեսնվելու համար,
արդէն մի ամիս է, որ ամեն տեսակ խօսակցու-
թիւնների և դատողութիւնների նիւթ է դառել
հարապակի մամուլի, մասնաւոր կիսապաշտո-
նական լրագրութեան Վիլհելմի ցանկութիւնը իր
դարձ նախաձեռն յետոյ արդէն շուտով Պետեր-
բուրգ գնալու՝ ընդհանրապէս համարվում է մի
ձեւաւոր Ռուսաց կայսերական տան հետ սերտ
բարեկամութիւն հաստատուելու։ Դեռ իր հօր մար-
մինը նոր էր յանձնված հողին, երբ Վիլհելմ ինք-
նագիր մի նամակ ուղարկեց թագաւոր կայսրին,
և ջերմ ցանկութիւն յայտնեց տեսակցութիւն ու-
նենալու։ Թագաւոր կայսրը մի ինքնազգի նամա-
կով յայտնեց, որ ինքը այդ տեսակցութեան ջերմ
ցանկացող է։ Եւ քաղաքական մամուլի մէջ և զիւ-
լոստիական շրջաններում զանազան տեսակ
բացատրութիւններ են տալիս այդ տեսակցու-

թեան հետերը կարծում են, որ դա քաղաքա-
կան մի առանձին նպատակ և ընտանոթութիւն
չի ունենայ, այլ լոկ մի քաղաքականական այցե-
լութիւն է, որով Գերմանիայի երկուստարը կայ-
սրը փոխարինում է այն այցելութեան, որ Թագա-
ւոր կայսրը արեց Վիլհելմ I-ին, գերմանական
այժմեան կայսրի պապին։ Վիլհելմ կայսրը իր
ձեռնութեան պատճառով չը կարողացաւ փոխա-
րինել այդ այցելութիւնը. նոյնը չը կարողացաւ
անել և Ֆրիդրիխ III իր ծանր հիւանդութեան
պատճառով, և ահա Վիլհելմ II շտապում է կա-
տարել այդ պարտաւարութիւնը, ցանկանալով ա-
մենից առաջ տեսնել Ռուսաց կայսրի հետ, նախ
քան եւրոպական որ և է պետութեան գլխի հետ
տեսնվելու։

Եւ քաղաքական մամուլի մի ուրիշ մասը այդ այ-
ցելութեանը քաղաքական առանձին նշանակու-
թիւն է տալիս, և այն միտքն է յայտնում, որ
երկու կայսրերի այդ անձնական տեսակցու-
թեան ժամանակ, երբ մեղքերը փոխանակելու
շատ դժուարութիւններ և յարմարութիւններ կը լի-
նեն, կը վճռեն քաղաքական այժմեան շատ
կնճառ հարցեր Գերմանիայի և Ռուսաստանի
մէջ, ինչպէս օրինակ, բազմաթիւ հարցեր, և այն
հարցերը, որոնք վերաբերում են Բալկանին, եւ-
րոպական խաղաղութեան, Միջին-Ասիայի գործե-
րին և այլն։

Վերջապէս եղան և այնպիսի կարծիք յայտ-
նողներ, որ այդ տեսակցութեան հետեանքը այն
կը լինի, որ Ռուսաստանի և Անգլիայի յարաբե-
րութիւնները կորցնեն, կը պարզվեն և այդ եր-
կու պետութիւնները կը միանան եւրոպական
այժմեան եռապետական դաշնակցութեան, և
այդպիսով կը կազմվի խաղաղութեան միութիւ-
նը։ Կնք առաջնակարգ պետութիւններից։

Մի կէտի մէջ միայն թէ մամուլը, թէ դիպլոմա-
տիան և թէ նոյն իսկ հասարակական կարծիքը
աւելի համաձայն են, այդ այն է, որ երկու միապե-
տերի տեսակցութիւնը կամրապնդի Ռուսաց և գեր-
մանական կառավարութիւնների բարեկամական
յարաբերութիւնները, կը փարատի այն մի քանի
տարակուսանքները, որոնք վերջին ժամանակները
ծագել են երկու կառավարութիւնների յարաբե-
րութիւնների մէջ, և այդպիսով մի նոր դարկ կը
առն Եւրոպայի քաղաքական կնճառ հարցերի
պարզվելուն, ուրեմն և աւելի հաստատուն կը
դարձնեն խաղաղութեան գործը, որին այժման
փախազում է ամբողջ Եւրոպան։ Եւ այդ տեսա-
կէտից ուրախութիւն են արտայայտում համարեա
ամեն կողմից։ Դա, և հարկէ, կը լինի ամենա-
ցանկալի արդիւնքը, որ կարող է տալ երկու
կայսրերի տեսակցութիւնը, որը այժմ ամենա-
մեծ ուշադրութիւն է դարձրել իր վրա։

Թէ ինչպէս կը կատարվի այդ տեսակցութիւնը,
և թէ ինչ որոշ հետեանք կունենայ, այդ ի հար-
կէ, մօտիկ ապագան կը ցոյց տայ։ Առ այժմ լուր
կայ, որ Վիլհելմ կայսրը չորս օր կը մնայ Ռու-
սաստանում, և ինչպէս պաշտօնապէս էլ յայտն-
ված է, կայսրին չի ուղևորել իշխան Բիսմարկի,
ինչպէս ենթադրում էին։

Մի քանի ժամանակից յետոյ Վիլհելմ կայսրը
տեսակցութիւն պէտք է ունենայ աւստրիական
կայսրի և իտալական թագաւորի հետ, այսինքն
իր դաշնակիցների հետ։ Մի բան, որ զանազան
դատողութիւնների առիթ է տուել, այդ այն է,
որ Վիլհելմ առանձին բարեկամական ցուցիկ
անում դէպի Անգլիան, և իր զահական ճախի
մէջ նոյն իսկ Անգլիայի անունը չէ տուել։

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ինչպէս մեղ գրում են Կ. Պոլսից, պատ-
րիարքական տեղապահի վաւերացման գիրը ար-
քունի պալատից Բ. Կրան հայտարարեց, իսկ
այդտեղից էլ պատրիարքարանին Հաւանքին մի
ամսից յետոյ պիտի կատարվի պատրիարքական
ընտրութիւնը։ Պատրիարքական ընտրութեան հա-
մար շատ մեծ ոգևորութիւն է տրուել Կ. Պոլսի
ոչ-ճայտ լրագիրներին էլ դեպքում են այժմ հա-
յոց Պատրիարքի ընտրութեան հարցով։

— Մայրաքաղաքի լրագիրները Միլհանդէնից
(Էլզասում) յունիսի 29-ից հաղորդում են, որ ի պա-
տիւ Էլզաս-Ղօթիւնից պիտի փոխարքայ իշխան Հո-
հենբիլլ Թուաւ ճաշի ժամանակ, իշխան Հոհենբիլ-
անց, որ իւրաքանչիւր ազգ կամեւում է պահպա-
նել իր նաւաճած երկրը և մասնաւոր խիստ միջոց-
ների է զինում, երբ տեսնում է, որ իր հարեան
երկրը կամեւում է վերադարձնել իրանից խլված
նահանգը։ Այդ է պատճառը, որ Էլզաս-Ղօթիւնի-

գիւյում խիստ միջոցներ են դրո՞ղ դրում իշխան
Հոհենբիլլի խօսքերով, ամեն միջոց դրո՞ղ կը դրվի
Էլզասը Ֆրանսիայից ստեղծելու և հաստատ-
կերպով Գերմանիային մօտեցնելու համար։

— Ելզասում գտնվող անգլիական զօրքերը
շուտով կուղարկվեն զուգուսների երկրը, ուր
պատերազմական գործողութիւնները շատ ծանր
կերպարանք են ընդունում։

— Մայրաքաղաքի լրագիրներին յուլիսի 1-ից
հեռագրում են հետեւեալը. «Այսօր, 10 1/2 ժամին
սերբիական թագաւորանի իշխան Ալեքսանդր
առանձին գնացելով Վիլհանդէնից ճանապարհ ըն-
կաւ դէպի Բէլգրադ, պատերազմական միջոցներ
գնեւերալ Պրոսպի և երկու աղիւստանների ու-
ղեկցութեամբ։ Տեղական ոստիկանութեան նա-
խագահը ճանապարհ գցեց իշխանին մինչև կա-
յսրանը։ Կլէմենտինա ամբարանքը, որտեղ ապ-
րում է Նատալիա թագուհին, շրջապատված էր
երեսնի չափ ոստիկաններով։ Թագաւորանից ու-
ղեկորութեան ժամանակ ներկայ էր ժողովրդի ա-
հազին բազմութիւնը։ Նատալիա թագուհու բա-
ժանկը իր որդեղ շատ սրտաշարժ էր։ Թագու-
հին խորհուրդ էր տալիս նրան Աստուծո երկիւ-
ղին ունենալ և հնազանդել ծնողին։ Ոստիկա-
նութեան նախագահը գլխաւոր եկաւ թագուհու
մօտ և յայտնեց, որ անպատճառ պէտք է հեռացնէ
որդուն մօրից։ Մի և նոյն ժամանակ նա յայտ-
նեց, որ ինքն թագուհին ևս պէտք է հեռանայ
Գերմանիայից։»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երկու ուսանողների մէջ խօսակցութիւն։

— Դու չես կարող քեզ երեսկայել որքան ար-
համարանքով եմ վերաբերվում ևս դէպի մեր բու-
լոր վարժապետները։

— Այդ մենք բոլորս, նկատեցինք, երբ դու վեր-
ջին հարցախնդիրների ժամանակ ոչ մի պա-
տախանով չարժանացրիր վարժապետներից ոչ
միին։

—

Երկու գերմանացի աշխարհագրագետ Կիպերտ
այս օրպէս ճանապարհորդում է Փոքր-Ասիայում,
ուղեկցութեամբ ղօկտոր Ֆարբրիցիուսի։ Գերմա-
նական լրագիրները հայտնում են, որ Մէլեք-Մա-
յի մօտ հուշակաւար գիտնականը գտաւ երկու հը-
նադարեան թմբածնների աւերակները։ Թմբածն-
ների սինկը դեռ կանգուն մնացին և թմբածն-
ները, ինչպէս երևում է, ահազին ընդարձակու-
թիւն ունենին։

—

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕԴԵՍՍ, 6 յուլիսի։ Այսօր եկաւ այստեղ Կիւլ-
մալու համար՝ Կրազան-Յանկով, բուլգարական
արդարադատութեան նախկին ղօկտոր Բօլշէվ և
Ֆինանսների նախկին ղօկտոր Մօշալով և բազմա-
թիւ իշխանութեան արտաքին գործերի գլխա-
ւոր քարտուղար Լիւդսկով։ Սպասվում է Տա-
տար-Բօլշէվիկեան շրջանի պատգամաւորութիւն
Պատգամաւորութիւնները Բէլգրադից կերթան
Կիւլմալ։ Վաղը սպասում են այստեղ Բուխարեստից
եկող պատգամաւորութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յուլիսի։ Անդրկասպեան երկա-
թուղու Սամարկանդեան մասի կառուցման վրա
հսկող գնեւերալ Ալեքսանդր Բարձրագոյն հրո-
վարտակով շնորհված է Ալեքսանդր Նէվսկու
բրիլիանտէ նշանները։

ՍՊԻՏԿ, 7 յուլիսի։ Անգլիական էմբը Զէլալ-
Արաղի շրջականերում ժողովեց մօտ 8,000 մար-
դիկ, չիլիարիաների մէջ ծագած անկարգութիւն-
ները ի նկատի ունենալու պատճառով։

ՊԵՏԵՐԳՈՒՅԴ, 7 յուլիսի։ Ժամի 1-ին և 30 բո-
ւլբին թագաւոր կայսրը ժամանեց ղինուրական
նաւահանգիստը և Ալեքսանդրիա նաւակով մտաւ
ժողովրդի մարտերու գերմանական կայսրին Նորին
Մեծութեան ավիտայում գտնվում են բոլոր Մեծ
իշխանները գերմանական համագործակցութեան
քաղաքականութեան գերմանական ղեկավար Ելզինից,
Նորին Մեծութեան ավիտայի գլխաւոր-մայր կոմս
Գօլշէյնիչը—Կուտուզով, գնդապետ Գլիւսով և
ավիտայի այլ պաշտօնականները։ «Ալեքսանդրիա»
նաւակին ուղեկցում է «Ստրէլա» շոգանաւը,
Մեծ իշխան Ալեքսի Ալեքսանդրովիչի հետ միա-
սին։

ԿԲՈՆՏՏԱՍ, 7 յուլիսի։ Այսօր առաւօտից նա-
ւահանգիստներում և նաւակայաններում կանգնած
բոլոր առեւտրական նաւերը դարձաւորեցան դրո-
շակներով, հասարակութեամբ լցված շոգանաւերը

մէկը միւսի ետեւից գնում էին դէպի նաւակա-
յանները։ Նշանակը հրաշալի է։ Երկրորդ ժամի
վերջում Պետրոպօլի կողմից երեքսու «Ալեքսան-
դրիա» կայսերական նաւը թագաւոր կայսրի լայնա-
նշանակի տակ և կանգ առաւ փոքրիկ նաւակա-
յանում։ Այդ ժամանակ ծովի հորիզոնում երեք-
ցան գերմանական նաւերը։ Մօտ 4 ժամին, գեր-
մանական նաւակաւորը, առջինից ունենալով կայ-
սերական «Հօհենցօլերն» նաւը, մտնում էր նա-
ւակայանը։ Մեծ նաւակայանում կանգնած ռու-
սական նաւատորմի նաւերին հրաման ուղարկվե-
ցաւ, և հենց որ նաւերը դարձաւորեցան դրօշակ-
ներով, նաւատորմի ամրութիւնները և նաւերից,
կանոնադրութեան համաձայն, սկսվեցաւ կայսե-
րական թմբածնութեամբ Վիլհելմ կայսրը
Ռուսաց ծովային համադրեւտով և անդրէասեան
ժապաւէնը ուսին անցկացրած ունենալով կանգ-
նած փոքրիկ կամուրջի վրա, բարեւում էր նաւե-
րի հրամանատարներին, որոնք պատասխանում
էին նրան բարձրաձայն «ուրայու»։ Գերմանական
նաւակաւորի նաւերը պատասխանում էին թմբածն-
ութեամբ։ Թագաւորը, բարձրացնելով ռուսաց դրօշակը
4 1/2 ժամին կայսերական «Հօհենցօլերն» նաւը,
մեծ կայմին վրա ունենալով կայսերական դրօշա-
կը, իսկ առաջնակայմին վրա Ռուսական դրօշա-
կը, անցաւ առեւտրական նաւահանգստի պատի
մօտով, որը լի էր ժողովրդով և որը քանակա-
մամբ ողջունում էր հիւր-թագաւորին։ Փոքր նա-
ւակայանին մօտենալու ժամանակ, կայսերական
նաւերին դիմաւորեցին թմբածնութեամբ
նաւատորմի նաւերը, որոնք կանգնած էին այդ
նաւակայանում։ Հրամաններ ուղարկեցան նաւե-
րին և երէկ եկած ամբիկական կորվետին, և
բոլոր նաւերը դարձաւորեցան դրօշակներով։ Այս-
տեղ տեղի ունեցաւ երկու կայսրերի տեսակցու-
թիւնը։

ՊԵՏԵՐԳՈՒՅԴ, 7 յուլիսի։ «Ալեքսանդրիա» նաւը
ընդունելով գերմանական կայսրին և նրա ավի-
տային, գնաց դէպի Պետերբուրգ, ուղեկցված լինե-
լով գծի վրա հանդէս դրված նաւերի թմբածն-
ութեամբ։ Պետերբուրգում նաւին հետեւում
էր «ОТРЫВКА» շոգանաւը։ Թագուհի կայսրուհին
ժամանեց ղինուրական նաւահանգիստը 3-րդ ժամին
5 1/4 ժամին ղինուրական նաւահանգստին թմբածն-
ութեամբ։ Թագաւորը մօտեցաւ «Ալեքսանդրիա» նաւը։ Ա-
յի վրա նաւահանգստի պալլիւսում գերմանա-
կան կայսրին դիմաւորեց թագուհի կայսրուհին
Նորին Մեծութեանը բարեւուց յետոյ, գերմանա-
կան կայսրը Ռուսական գնեւերալի համագործակցութեան
մօտեցաւ։ Նաւահանգստում հանդէս դրված պատ-
աւոր պահապան գնդին և ռազմորտ ընդունեց
Երաժիշտների խումբը ամեն էր գերմանական
հիմնը։ Կրանից յետոյ դէպի Պետերբուրգի Մեծ
պալատը գնացին թագաւոր կայսրը գերմանա-
կան կայսրի, թագաւորանիցի և Հինգիլ իշխանի
հետ միասին չորս տեղ ունեցող կառքով, Թա-
գուհի կայսրուհին Մեծ-Իշխաններին հետ—
բաց կառքով, Միխայիլ և Նիկոլայ Նիկոլաւիչ
Մեծ իշխանները, Վլադիմիր և Ալեքսի Ալեքսան-
դրովիչ Մեծ իշխանները առանձին էին գնում
Պալատի առաջ գտնվող պարկում կարգ կարգ
հանդէս էին դրված գործողից զօրապետը,
զինուորական ռուսահանգստների աշակերտները և
Նորին Մեծութեան թիկնապահները։ 7 1/2 ժամին
նշանակված է ընտանեկան ճաշ։

ՊԵՏԵՐԳՈՒՐԳ, 7 յուլիսի։ Պետերբուրգի մամուլը
միաձայն ողջունում է Վիլհելմ կայսրի գալուստը,
որպէս խաղաղութեան պատգամ, կատարեալ
վստահութիւն յայտնելով նրա բարի դիտաւորու-
թիւնների մասին։

Վիլհելմ, 7 յուլիսի։ Լրագիրների մեծ մասը
մատնացոյց անելով այն բանի վրա, որ կայսր-
ների տեսակցութիւնը խաղաղութիւնը պահպա-
նելու համար մեծ նշանակութիւն ունի, յայտա-
րարում է, որ Աստուծան խաղաղութեան կողմ-
նակից է և յոյս է յայտնում, որ Ռուս-գերմանա-
կան մեծաւորութիւնը չի կատարվի ի վնաս
Գերմանիայի դաշնակիցներին։

Բէլ-Գրու, 7 յուլիսի։ Ապահարդանի վերաբեր-
մամբ բոլոր հոգեւորականները, բացի Բէլգրադի
միտոպոլիտից և զաչարեան եպիսկոպոսից, թա-
գաւորի դէմ են յօսում։ Բացի դրանից, սինոդը
յայտարարում է, որ «պաշտպանը պէտք է տալ
կոմիտորիան, իսկ թագաւորը կոմիտորիային
հաւատ չէ ընծայում և պահանջում է, որ սինոդը
վճռէ գործը, որի անդամներին ինքն է նշանա-
կում և այդ պատճառով կարողանա ունեն նրանից»

ՓԱՐԻՋ, 7 յուլիսի։ Այստեղ հասաւ Նատալիա
թագուհին։ Թագուհին մտադրութիւն ունի գնալ
Ելզինից, շօշաւիկայում։

Խաղաղ-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Միջաշխան կամուրջի վրա, Միրզոբեյի տուն, № 48
Վ Ե Ր Ջ Ի Ն Օ Ր Ե Ր
Թիֆլիսում մի աննման հանդես
Հաստ հաղապարհում և վերին աստիճանի հետաքրքիր
Հ Ն Դ Կ Ո Ւ Հ Ի

ՕՐԻՈՐԴ ՊԱՍՏՐԷԼ

Սև և սպիտակ տիկին
Բնութան հետաքրքիր խաղ, կատարողուհի և օձերը զսպող (Բոս կոնսուլիատի 5
արշին լայնությամբ և 3 1/2 ֆուտ լայնությամբ 7 արշ. լայն. և 2 1/2 պուգ ծանրությամբ):
Ամենանշանաւոր հրաշք XIX դարի, օրիորդ Պաստրել պատիւ ունէր Բայրամի վեր-
ջին տօներին ներկայացումներ տալ Սուլթանի պալատում, և Պոլսում:
Օրիորդ ՊԱՍՏՐԷԼ ծնվեց եւրոպացի մօրից և այն նշանաւոր երեւոյթ է ներկայաց-
նում, որ նրա մարմինը տեղ տեղ սպիտակ է, իսկ տեղ տեղ սև է, այսինքն դեմքը
և ձեռքերը կատարելապէս սպիտակ են, ինչպէս եւրոպացիների մօտ, իսկ մարմնի մը-
նացած մասերը սև գոյնի են և ծածկված երկար մազերով:
Օրիորդ ՊԱՍՏՐԷԼ ունի վկայականներ Եւրոպայի և Ամերիկայի յայտնի պրօֆեսոր-
ներից, որոնք հաստատել են այդ բնական երեւոյթի ճշգրտութիւնը:
Օրիորդ ՊԱՍՏՐԷԼ դիմելով Թիֆլիսի հասարակութեանը, խնդրում է օգուտ քաղել
իր այստեղ կարճ ժամանակեայ մնալուց և անտես չառնել նրան իր այցելութեամբ:
Օրիորդ ՊԱՍՏՐԷԼ ցոյց է արժեքում ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 1 ժամ
և երեկոյեան 5 ժամից մինչև 10 ժամ:
ՄՈՒՏՔԻ ԳԻՆԸ ՊԱՍՏՐԷԼՈՒ Է 10 ԿՕՊԵԿ:

Կառավարիչ ՄՈՒԼԷ
1—1

ՆԱԽԱՐԱՐՈՒ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՄՆԵԴԱՆՈՑ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա. Ա. Ս. ՕՏԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒՄ—9—11 ժ. վիրաբուժական (նոյնպէս և ատամնաբուժի) և վնաս. ց.
ԲՈՒՆԻՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ՍՕՐՈՒԲԵՎ—11—12 ժ. ատամնաբուժ.
ՏԱՐԱՍՅԵՎ—11 1/2—12 1/2 ժ. ամեն օր, բացի կիրակի. աչքաբուժ.
ԱՐՏԵՄԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի երեքշաբթի և ուրբաթ.
ԵՐԵՎԱՆԵՐԸ
ԳԱՂՈՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԽԱՐԱՐՈՒՄ—6 1/2—7 1/2 ժ.
ՓՈՒԼԻՆԵԱՆ—6 1/2—7 1/2 ժ.
Հիւանդանոցում է մահկաբարձուհի Մ. Օ. Գ. Ե.
Վճար—50 կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնու-
թեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱՐԱՐՈՒՄ

- 1) Հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑՈՒՀԻ պահանջաւ վկայականով, որը կարողանայ դատ տալ ՈՒՍՈՒՑ ԼԵՁՈՒ և ԹՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆ:
- 2) Հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ, պահանջաւ վկայականով, որը կարողանայ դատ տալ հայոց լեզուով աւանդելով լուրջ առարկաները: Մեր հասցէն՝ ВЪ гор. Душеть. Армянскому благотворителю Теръ-Саркису Ерицянцу.

1—3



ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊՈՍՏԻԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆԻՑ

Այդ էլիկսիրը հնարել է 1373 թ. ին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՈ:

Այդ էլիկսիրի մի քանի կաթիլների ամենօրեայ զործածութիւնը պահպանում է ատամները փշանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինիւ-
րը և թարմացնում է բերանը:

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաս-
տում են դարձեալ ԱՍՏՐԱՓՈՇԻ և ՊԱՍՏԱ ատամներ
սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բե-
նել ամեն փոքր ի շատէ նշանաւոր դեղատնիքում, ինչպէս և դեղատան ապրանքների
պահեստներում ու պարֆիւմերական մագաղաններում:

ՊԵՏՐՈՍ ԱԳԵՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.
19—30 (Շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, յուլիսի 21-ին, ՄԵՕՁ (MEUSE) շոգենաւը, նաւապետ ՍԵՐԵՆ-
ՆՕՆ (SERENON) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսելը: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում Լէմուշուրի տան, Նաբրեւէճայա, և Թիֆլիսում՝ Նախկին Այ-
ծրունի գալլերէում, № 103.

1—3

Կ Ա Պ Ա Լ Ո Վ

արժեւոր են ԵՐԵՎԱՆԻՄ գտնվող "ՋԱՐԱՅԻ" և "ՋՈՒԼՅԻ" քարավանատները:
Պայմանների մասին հարցնել Թիֆլիսում Դժոյցօլայա փողոցի վրա գտնվող ՂԱԼԱՄԲԵ-
ՐՕՎԻ մագաղանում և Ս. ՊԵՏԵՐՐՈՒԹԵԱՆ ապահովութեան ընկերութեան գործակա-
լութեան մէջ:

4—15

Խոնարհարար խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք բարեհաճել էին իմ թարգմանած՝

„ԲՆԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ“

Գրքի համար (հեղ. պրօֆէսոր Ա. Գաբրիէլի) բաժանորդներ զանաւոր նեղութիւնը յանձն առ-
նել, բարեհաճեն ուղարկել բաժանորդութիւնը և դրամը, որպէս զի կարողանամ ձեռիս որոշել տպա-
գրելի օրինակների քանակութիւնը և ժամանակին դեռեղի յարգելի բաժանորդաց ազգանունները:
Գիրքը լոյս կը տեսնի առաջիկայ սեպտեմբերին: Հասցէն՝ Тифлисъ. Учителю Арм. Дух. Сем.
Нерсисянъ, Григорію Шахбудагянцу.

1—3

ԵՐԿՈՒ ԱՄՈՒՄԻՆԵՐ երկար ժամանակ ՈՒՍՈՒՑՈՒԹԻՒՆ արած լինելով ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ
ԴՊՈՐՏՆԵՐՈՒՄ, ձեռնառու պայմաններով, ցանկանում են տեղ ունենալ նոյն դպրոցներում՝ հայոց և
ռուսաց լեզուներից, այդ լեզուներով աւանդելով միւս առարկաներից, թուարանութիւնից և ձեռա-
գործութիւնից: Հասցէն. учителю Мамиконянцъ, оставить на заводъ Сиракана Теръ-Марти-
расянца въ Эривань.

1—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լաբորատորնայա փողոց, № 11)

Ցանկացողը, ունենալ իրանց առեւտրական գործերի համար, անցեալ յունիս ամ-
սում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհա-
ձեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են
մասնագիտական առեւտրական կրթութիւն և, Կովկասի ուսումնարանական շրջանի հո-
գաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ:
Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 15-ից: Կուրսերի ծրագրերը և կա-
նոնները կարելի է ստանալ ձերի ապէս եղբ. Ծովանօջիների բանկային գրասենեակում
և կուրսերի հիմնողի բնակարանում: Ոտարաբարաբացիք դիմում են՝ Тифлисъ, учре-
дителю курсовъ С. П. Мануэльянцу.

2—5 (Ե. Շ.)

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է հայոց լեզուի և թուարանութեան դասեր տալ: Ներխառն դըպ-
րոցում աւարտած է և ՄԻ ՏԱՐԻ արդէն վարել է ուսուցչի պաշտօնը: Գանկանում է ուսուցչութիւն
անել գուսուսական քաղաքներում կամ ձեռնառու պայմաններով զբաղելու:
1—3

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈԳԵՆԱԿԵՐ ՈՒՆԵՑՈՂ

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԻՆԱՅՈՒԹԻՒՆ
ԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրոպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամե-
րիկայի բոլոր զխաւոր նաւահանգիստների մէջ: Շոգենաւերը Բաթումից դուրս են գա-
լիս կանոնաւորապէս ամեն շաբաթ:

1500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս ամեն երեքշաբթի
օր դէպի Անատոլիայի բոլոր դճերը և Կ. Պոլիս:

Բոլոր տեղեկութիւնները մասին (Թէ ճանապարհորդների և թէ ապրանքների
մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ՉԵՐՐՈՒՍԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գօլօվինսկի
պրօսպ. № 34 և ԲԱՐՈՒՄԻՄ—Իշխ. Գուբիէլիի տանը:

6—40

ՊԵՏԱԳՐՈՍԿՈՒՄ այս տարի բացվելի ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ հոգաբարձութիւ-
նը հրաւիրում է այդ դպրոցի համար մի ՈՒՍՈՒՑԻՉ, որ հմուտ լինի հայոց լեզուին և
մասամբ ռուսերէնին: Ցանկացողները թող շտապեն իրանց պայմանները յայտնել այս
հասցէով՝ Пятигорскъ. Багдасару Ходжаеву.

3—3

Պարագելով ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՈՎ, խնդ-
րում եմ այդ հարցի հետ ծանօթ անձերին յայտնել ինձ թէ ինչ ձեռագիր կամ
տպած աղբիւրներ և հետազոտութիւններ (ամբողջ գրքեր թէ փոքրիկ յօդաւածներ
պարբերական թերթերի մէջ, եւրոպական թէ ասիական լեզուներով, թարգմանութիւն
թէ ինքնուրոյն) յայտնի են նրանց այդ հայ գաղթականների մասին: Հասցէն՝ Тиф-
лисъ, Сергиевская ул., իսկ սեպտեմբերին վարչակայի համալսարան:

Ս. Լիսիցեանց

6—10

ՄՕՁԴՕԿԻ հայոց երկես դպրոցների հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ հայոց լեզուի և
առարկանների համար, շաբաթական 24—26 դասով, տարեկան 600 ռուբլի վարձա-
տրութեամբ: Ուսուցիչը կը ստանայ ճանապարհածախս, սենեակ, ծառայ, փառելափայտ
և լուսաւորութիւն: Պահանջվում է օրինաւոր վկայական:

Ցանկացողները պէտք է դիմեն կամ անձամբ կամ նամակով Մօզդօկի հայոց երկ-
ես դպրոցների հոգաբարձութեան:

2—3

Հոգաբարձու Յով. ԳԱՆՁՈՒՄԵԱՆՑ

ԵՐԿՈՒՆԱԼ ՀԱՄԱՍԱՐՄԱՍԱՐ

ՄԱՏԹԵՈՍ Ա. ԱԽՈՒՄԵԱՆՑ

Ընդունում է առաւօտեան 8 ժամից մինչև 10-ը և երեկոյեան 4-ից մինչև 8-ը:
Գօլօվինսկի, տ. Դօրբժանսկի:

3—3

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՆԻ

„ՃԱԿԱՏԻ ԳՐՈՒՄԾԲԸ ԶԷ ԶՆՁՎԵԼ“

ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՁՐՈՅՑ

Գինը 40 կօպէկ

Դիմել. Шуша, Аршаку Туманянцу.

3—5

ԱՂԱՏԱՑՈՒՑ փոխադրված լինելով ՆՈՒԹԻ, խնդրում եմ այսուհետև ապրանքներ կամ նա-
մակներ իմ անունով Աղստաֆա կոչւարկել, այլ Նուրի: Հասցէն. ВЪ НУХУ, Агенту С. П. К^о.
Надежда, АПРЕСЯНЦУ. Արել Ապրեսյանց (Նուրի):

1—2

ԿԵՐՈՍԻՆԻ ՄԱՍՆԱԳԷՏ ԳԻՄԻԿՈՍ

Արտասահմանում իր ուսումն աւարտած և հինգ տարու չափ Պետերբուրգում, համալսարա-
նում, Դ. Ի. Մէնդէլէեւի մօտ և նրա առաջնորդութեամբ յատկապէս ԿԵՐՈՍԻՆԻ գործով պարագա-
ծ փորձված քիմիկոսը կանոնաւոր է այժմ կերպիսի մի օր և է գործարանում քիմիկոսի պաշտօն տա-
նալ, ձեռնառու պայմաններով:

Դիմել՝ ПЕТЕРБУРГЪ. В. О. Большой пер. 4. Ф. А. Расинский.

2—2